ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

ԵՐԵՒԱՆԻ ԵՒ ՆՐԱ ՄԵՐՁԱԿԱՅՔԻ ԳՐՉՕՋԱԽՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԱԾ ԳՐԻՉՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ

Մուտք

Երեւանի եւ երեւանամերձ բնակավայրերի պատմութեան, դրանց հոգեւոր-մշակութային կեանքի, առանձին դէպքերում նաեւ կենցաղին առնչուող տարբեր հարցերի ուսումնասիրութեան կարեւոր սկզբնաղբիւրներից են այստեղ ստեղծուած կամ պահուած ձեռագիր մատեանները, որոնց յիշատակարաններն իրենց արժանահաւատ տեղեկութիւններով յաճախ են եղել հետազօտողների ուշադրութեան կենտրոնում։ Միւս կողմից՝ ձեռագրական պատկառելի ժառանգութեան առկայութիւնն ինքնին վկայում է, որ ինչպէս Երեւանում, այնպէս էլ նրա մերձակայքում դեռեւս միջնադարից գործել են տարբեր գրչօջախներ, որոնցում իրենց ձեռագրաստեղծ գործունէութիւնն են ծաւալել տասնեակ գրիչներ։

Երեւանի եւ նրա մերձակայքի ձեռագրական ժառանգութեանն առաջին անդրադարձողներից է եղել պատմաբան եւ հմուտ ձեռագրագէտ Արտաշէս Մաթեւոսեանը։ 1972 թ. Երեւանի 2750-ամեակի առիթով պատրաստած իր զեկուցում-յօդուածով նա առաջին անգամ յատուկ ուշադրութիւն է դարձրել տեղի գրչութեան կենտրոններին եւ հարիւրամեակներ ի վեր դրանցում ձեռագրաստեղծ գործունէութիւն ծաւալած անձանց[1]։

Որպէս կարեւոր եւ արժանահաւատ սկզբնաղբիւրներ՝ տարբեր ժամանակներում երեւանեան գրիչների թողած ուշագրաւ յիշատակարաններից մէջբերումները յաճախ են տեղ գտել նաեւ Երեւանի պատմութեան քաջագիտակ Թադեւոս Յակոբեանի հեղինակած «Երեւանի պատմութիւնը» քառահատորեակի էջերում[2], որով միաժամանակ ընդգծուել է հայոց ապագայ մայրաքաղաքի միջնադարեան հոգեւոր-մշակութային կեանքում ձեռագրակերտման աւանդոյթների շարունակական գոյութիւնը։ «Հին Երեւանը» խորագրով իր արժէքաւոր ուսումնասիրութեան մէջ առանձին գրիչների մասին սակաւադէպ յիշատակումներ ունի նաեւ պատմաբան-բանասէր Երուանդ Շահազիզը[3], որի հետեւանքով նոյնիսկ արժանացել է Վիեննայի Մխիթարեան հայր Ներսէս Ակինեանի քննադատական դիտարկմանն առ այն, որ «Հին Երեւանը կարող էր պատմութեան մէջ աւելի պայծառ երեւան գալ, եթէ աւելի չափով նկատի առնուէին ձեռագրական յիշատակարանները»[4]։

---

[1] **Մաթեւոսեան Ա.**, Երեւանի գրչութեան կենտրոնները, «Երեւանի յոբելեանը. քաղաքի 2750-ամեակի յոբելեանական տարեգրութիւն», կազմող-հեղինակ՝ Խաչիկեան Ա., Երեւան, «Հայաստան» հրատ., 1972, էջ 113-118:

[2] **Յակոբեան Թ. Խ.**, Երեւանի պատմութիւնը (հնագոյն ժամանակներից մինչեւ 1500 թ.), Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1969: **Նոյնի՝** Երեւանի պատմութիւնը (1500-1800 թթ.), Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1971: **Նոյնի՝** Երեւանի պատմութիւնը (1801-1879 թթ.), Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1959: **Նոյնի՝** Երեւանի պատմութիւնը (1879-1917 թթ.), Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1963:

[3] **Շահազիզ Ե.**, Հին Յերեւանը, հրատ. Մելքոնեան ֆոնդի, Յերեւան, 1931, Ա. Սարգսեանի եւ Լ. Ամիրջանեանի ծանօթագրութիւններով եւ լուսանկարներով լրամշակուած վերահրատ. Մ. Արք. Աշճեան, Երեւան, «Մուղնի» հրատ., 2003:

[4] **Ակինեան Հ. Ն.**, Հին Երեւանը, «Հանդէս ամսօրեայ», 1934, թիւ 5-7, էջ 327:

Նկատառելով Երեւանի եւ նրա մերձակայքի գրչօջախների վերաբերեալ առանձին քննութեան անհրաժեշտութիւնը, որն ընդգծուել է նաեւ վերոնշեալ ուսումնասիրութիւններում, ինչպէս նաեւ մեր ձեռքի տակ եղած ձեռագրական նոր տուեալներն ու ճշտումները՝ նախաձեռնել ենք «Երեւանի գրչութեան կենտրոնները եւ ձեռագրական ժառանգութիւնը» թեմայով հետազօտական մի աշխատանք՝ քննութեան առնելով միջնադարեան Երեւանում ու երեւանամերձ բնակավայրերում (Նորք, Առինջ, Քանաքեռ, Նորագաւիթ) երբեմնի գոյութիւն ունեցած ձեռագրաստեղծման կենտրոններն ու դրանցում գրչութեամբ զբաղուած գործիչների ձեռագրական ժառանգութիւնը[5]։

Ընդհանուր առմամբ՝ այդ գրչօջախների ու նրանցում ընդօրինակուած մատեանների քննութիւնը ցոյց է տալիս, որ նշեալ բնակավայրերում ԺԳ. դարից ի վեր տարբեր ակտիւութեամբ գործել են մէկ տասնեակից աւելի գրչօջախներ, որոնց հովանու ներքոյ տարբեր ժամանակներում ուսանել կամ ձեռագրեր են ընդօրինակել բազմաթիւ գրիչներ։ Արդ, անցնենք գրչութեան այդ անխոնջ մշակների ձեռագրական ժառանգութեան քննութեանը։

Երեւանի եւ երեւանամերձ գրչօջախների գրիչները.

*Ձեռագրական տարբեր հաւաքածոներում պահուող հայերէն գրչագրերի մեծ ու փոքր ցուցակների քննութեան արդիւնքում հնարաւոր եղաւ առանձնացնել ութ տասնեակից աւելի ձեռագիր մատեան, որոնք ամբողջութեամբ կամ մասնակի ընդօրինակուել են միջնադարեան Երեւանի, Նորքի, Առինջի, Քանաքեռի եւ Նորագաւթի եկեղեցիներում կամ դրանց հովանու ներքոյ[6]։ Ըստ որում՝ նշուածներից, որպէս հնագոյն գրչավայր, յիշատակուած են Նորք գիւղաքաղաքն ու ժամանակին այստեղ կանգուն Սուրբ Ստեփանոս եկեղեցին[7], որի հովանու ներքոյ Սարգիս քահանայ գրիչը 1297 թ. ընդօրինակել է ներկայում Մաշտոցեան Մատենադարանում պահուող եւ 127 թերթից բաղկացած Հ՝մր 522 «Տօնապատճառ» ժողովածուն[8]։ Նոյն Սարգիս քահանայի գրչին է պատկանում դարձեալ Մաշտոցեան Մատենադարանում պահուող Հ՝մր 5929 «Ճառընտիր» մատեանը, որը թէեւ թուակիր չէ, սակայն ժամանակով մերձ պէտք է լինի նախորդ ձեռագրին[9]։ Դատելով Սարգիս քահանայի ընդօրինակած այս երկու մատեանների գեղեցիկ բոլորգրից (**նկ. 1**)՝ Ա. Մաթեւոսեանն իրաւամբ նրան վարժ գրիչ է համարել եւ նշել, որ ԺԳ. դարի այս գրչագրերը վկայում են տեղում զարգացած գրչարուեստի գոյութեան մասին[10]։*

Բոլորովին վերջերս մեզ յաջողուեց գտնել Սարգիս գրչի ընդօրինակած մէկ այլ

---

[5] Հետազօտութիւնն իրականացւում է «Երեւանի գրչութեան կենտրոնները եւ ձեռագրական ժառանգութիւնը» թեմայի շրջանակներում՝ ՀՀ Գիտութեան կոմիտէի տրամադրած դրամաշնորհով (ծածկագիր՝ 19YR-6A035)։ Ուսումնասիրութիւնը կատարում են պ. գ. թ. Արսէն Յարութիւնեանը, բ. գ. թ. Խաչիկ Յարութիւնեանը եւ արուեստաբանութեան մագիստրոս Աշխէն Ենոքեանը։

[6] Երեւանի եւ երեւանամերձ գրչօջախների մասին առաւել մանրամասն տե՛ս **Յարութիւնեան Ա.**, Հին Երեւանի եւ նրա ներկայ արուարձանների եկեղեցիներն իբրեւ գրչութեան կենտրոններ, «Բանբեր Մատենադարանի», թիւ 30, Երեւան, 2020, էջ 455-479։

[7] **Մաթեւոսեան Ա.**, Երեւանի գրչութեան կենտրոնները, էջ 114։ **Յակոբեան Թ. Խ.**, Երեւանի պատմութիւնը (հնագոյն ժամանակներից մինչեւ 1500 թ.), էջ 267։

[8] Ձեռագրի մանրամասն նկարագրութիւնը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ **Եգանեան Օ.**, **Զէյթունեան Ա.**, **Անթաբեան Փ.**, **Քեօշկերեան Ա.**, խմբագրութեամբ՝ **Մնացականեան Ա.**, **Եգանեան Օ.**, **Զէյթունեան Ա.**, ցանկերը՝ **Դաւրիկեան Վ.**, «Նայիրի» հրատ., Երեւան, 2004, սիւն 1121-1126։

[9] Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., կազմեցին՝ **Եգանեան Օ.**, **Զէյթունեան Ա.**, **Անթաբեան Փ.**, ցանկերը եւ համեմատական տախտակները՝ **Եգանեան Օ.**, խմբագրութեամբ՝ **Խաչիկեան Լ.**, **Մնացականեան Ա.**, ՀԳԱ հրատ., Երեւան, 1970, սիւն 213։

[10] **Մաթեւոսեան Ա.**, Երեանի գրչութեան կենտրոնները, էջ 114։

ձեռագիր եւս, որը պահւում է Մխիթարեան հայրերի վենետիկեան մատենադարանում եւ կրում է 278 թուահամարը[11]։ Մատեանը պարունակում է միջնադարեան Հայաստանի նշանաւոր գիտնական Վարդան Վարդապետ Արեւելցու «Մեկնութիւն Սաղմոսաց» երկի ընդօրինակութիւնը։ ՄՄ Հմր 5929 ձեռագրի նման այս մատեանն էլ թուակիր չէ եւ չունի գրչի գլխաւոր յիշատակարան, սակայն 136բ եւ 346բ էջերի երկու սեղմ յիշատակագրութիւններում իր անունը յայտնած գրիչը նշել է նաեւ հօր՝ Ծառերի անունը, որը գտնում ենք նաեւ նախորդ երկու ձեռագրերի յիշատակարաններում։ «Յիշեսցի անպիտան գրիչս Սարգիս՝ Ծառերո որդի եւ մերո նախնեաց. ամէն»,- արձանագրել է Սարգիս գրիչը վենետիկեան ձեռագրի նշեալ յիշատակագրութիւններից մէկում[12]։ Ձեռագրի նկարագրութեան հեղինակ հայր Սահակ Ճէմճէմեանն այն թուագրել է ԺԴ. դարասկզբով, որը, թերեւս, ընդունելի է՝ հաշուի առնելով Սարգիս գրչի՝ 1297 թուականին ընդօրինակած «Տօնապատճառ»-ի փաստը։

Այսպիսով՝ նորքեցի Սարգիս գրչից մեզ յայտնի է արդէն երեք ձեռագիր, որոնք վերահաստատում են Ա. Մաթեւոսեանի այն միտքը, որ ԺԳ. դարում Սուրբ Ստեփանոս եկեղեցու հովանու ներքոյ գրչութիւնը ծաղկել է, իսկ Սարգիս քահանան եղել է նոյն շրջանի արդիւնաշատ գրիչներից։ Յաւօք, մեզ հասած ձեռագրերը թոյլ չեն տալիս խօսել այս գրչօջախի յետագայ ընթացքի վերաբերեալ։ Դեռ աւելին, յաջորդող ողջ հարիւրամեակն ամուլ է ոչ միայն այս, այլեւ երեւանեան միւս գրչակենտրոնների ձեռագրական ժառանգութեան առումով. ԺԴ. դարում այս գրօջախներում ընդօրինակուած թուակիր գէթ մէկ մատեան մեզ յայտնի չէ։

Բարեբախտաբար, Երեւանի ձեռագրական ժառանգութեան տեսանկիւնից անպտուղ այս ընթացքը տեւել է շուրջ մէկ հարիւրամեակ, եւ արդէն ԺԵ. դարում Երեւանում եւ նրա մերձակայքում նկատւում է ձեռագրաստեղծման աշխատանքների աշխուժութիւն։ Միայն այս շրջանից մեզ է հասել մօտ մէկ տասնեակ ձեռագիր մատեան, որոնք ընդօրինակուել կամ ծաղկուել են ինչպէս բուն Երեւանի, այնպէս էլ նրա մերձակայքի տարբեր սրբավայրերում։ Յատկանշելի է, որ ԺԵ. դարի թուակիր վաղագոյն ձեռագիրը, որը պարունակում է Գրիգոր Տաթեւացու «Քարոզգիրք»-ը (ՄՄ Հմր 6405), ընդօրինակուել է 1409-1410 թթ.[13] Երեւանի հիւսիսում գտնուող Սուրբ Անանիա առաքեալի անապատում (ներկայիս Ջօրաւոր Սուրբ Աստուածածին եկեղեցի). «ի գաւառիս Այրարատեան, յանապատիս Երեւանոյ, առ դրան սուրբ տաճարիս Անանիա առաքելոյ»[14]։ Յիշատակարանի համաձայն՝ ձեռագրի գրչութիւնն իրականացրել են հիմնականում[15] երեք գրիչներ՝ Գալուստ Վարդապետ Վաղադնեցին, Սիմէոն կրօնաւորը եւ Մե-

---

[11] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. է., յօրինեց **Ճէմճէմեան հ. Ս. Վրդ.**, Վենետիկ-Ս. Ղազար, 1996, սիւն 707-712:

[12] Նոյն տեղում, սիւն 709: Տե՛ս նաեւ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, ԺԴ դար, մասն Բ (1326-1350 թթ.), կազմողներ՝ **Խաչիկեան Լ.**, **Մաթեւոսեան Ա.**, **Ղազարոսեան Ա.**, Երեւան, Մատենադարան, 2020, էջ 369:

[13] Նկատենք, որ Թ. Յակոբեանը, որպէս Երեւանում գրուած հնագոյն ձեռագիր, նշում է 1405 թ. ընդօրինակուած ՄՄ Հմր 4060 Աւետարանը, տե՛ս **Յակոբեան Թ. Խ.**, Երեւանի պատմութիւնը (հնագոյն ժամանակներից մինչեւ 1500 թ.), էջ 289-290: Գիտնականն Աւետարանի այս թուականը եւ գրչավայրը վերցրել է ԺԵ. դ. հայերէն ձեռագրերի յիշատակարանների ժողովածուից, որտեղ ակադ. Լ. Խաչիկեանը նշուած ձեռագիրը թուագրել է 1405-ով՝ նկատի ունենալով այն, որ յիշատակարանի գրչութեան ժամանակ դեռեւս ողջ է եղել Լէնկ-Թեմուրը, ձեռագրի գրչութեան վայրն էլ համարել է Երեւանը, տե՛ս ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), կազմեց **Խաչիկեան Լ. Ս.**, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1955, էջ 51 (ծնթ.): Իրականում, ինչպէս մեր գործընկերներն են պարզել, բննուող ընդարձակ յիշատակարանը գրուել է բուն ձեռագրի ընդօրինակութիւնից յետոյ եւ այն պէտք է համարել ոչ թէ գրչինը, այլ ստացողինը, տե՛ս **Յարութիւնեան Ա.**, **Սիմոնեան Ա.**, Ջօրաւոր Աւետարանը, Երեւան, 2016, էջ 8-15:

[14] ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), էջ 106:

[15] Ձեռագրի մի քանի թերթ ընդօրինակել է Յովհաննէս (Ոհանէս) անունով մէկ այլ գրիչ: Տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ., սիւն 313, **Յարութիւնեան Ա.**, Երեւանի Ս. Անանիա առաքեալի անապատը կամ Ջօրաւոր Ս. Աստուածածին եկեղեցին, Երեւան, Ջօրաւոր Ս. Աստուածածին եկեղեցի, 2020, էջ

*ծոփավանքի ապագայ երեւելի գործիչ ու բաբունապետ Թովմա Մեծոփեցին[16], որը միաժամանակ ընդօրինակուած ձեռագրի պատուիրատու-ստացողն էր եւ անաւարտ մնացած քարոզներից մէկի լրացնողը։ Յիշատակարանում այդ մասին կարդում ենք. «սակաւ ինչ աշխատեցայ,- գրում է Մեծոփեցին,- եւ զպակասութիւն քարոզիս լցի ի հոգելից վարդապետաց բանից, որ էր թերի մնացեալ ի սուրբ հօրէն մերմէ (իմա՛ Գրիգոր Տաթեւացի,- **Խ. Յ.**)»[17]։ Առանձնանշելի է, որ մատեանի ընդօրինակումից ընդամէնը մէկ տարի առաջ՝ 1409 թ., նոյն վայրում Մեծոփեցին վարդապետական աստիճան էր ստացել իր սիրելի ուսուցիչ, հայ միջնադարի նշանաւոր աստուածաբան Գրիգոր Տաթեւացուց[18], եւ մի որոշ ժամանակ Անանիա առաքեալի անապատում մնալուց յետոյ վերադարձել էր Մեծոփավանք[19]՝ այնտեղ ծաւալելով իր հիմնական գրական եւ ուսուցչական գործունէութիւնը։ Գալուստ Վարդապետ Վաղադնեցին էլ իր յետագայ գործունէութիւնը շարունակել է Տաթեւում[20], իսկ ահա մատեանի գրիչներից Սիմէոն կրօնաւորը, ինչպէս նշւում է ձեռագրի յիշատակարանում, մահացել էր ընդօրինակման աւարտին։մյ ցղֆ*

Մեզ յայտնի ժամանակագրօրէն յաջորդ ձեռագիրն ընդօրինակուած է 1425 թ. երեւանամերձ հնագոյն բնակավայրերից մէկի՝ Առինջ գիւղի արուարձանում գտնուող Զագավանքի կամ Գետարգելի Սուրբ Նշան վանական համալիրում[21]՝ Դաւիթ վանահօր եւ Սարգիս կրօնաւորի պատուէրով (ՄՄ Հ՝ 1114Բ[22])։ Այդ մասին տեղեկանում ենք մատեանի գրիչ Ստեփանոս կրօնաւորի յիշատակարանից. «Արդ, գրեցաւ սա յաստուածաբնակ սուրբ ուխտս, որ կոչի Զագավանք, ընդ հովանեաւ Սուրբ Գետարգելիս, եւ Սուրբ Սարգսիս՝ Կուրանց կոչեցեալ, եւ Սուրբ Աջոյս Կիրակոսի եւ այլ սրբոց»[23]։

Վաղմիջնադարեան յուշարձաններով հարուստ Առինջ գիւղից մօտ 3 կմ հեռաւորութեան վրայ գտնուող վանական այս համալիրը միջնադարում, մասնաւորապէս՝ ԺԵ-ԺԷ. դդ., աչքի է ընկել նաեւ որպէս ձեռագրաստեղծման ակտիւ կենտրոն[24]։ Ստեփանոս գրչի յիշատակարանի համաձայն՝ վանքում նոյն ժամանակահատուածում մեծ թիւ են կազմել միաբանները, որոնց անուանապէս թուարկելը գրիչը պատեհ չի համարել։ Նրանցից միայն երկուսին՝ մատեանը կազմողներ Թովմային (Թոմա ձեւով) եւ Ներսէսին, իր սեղմ յիշատակագրութեան մէջ նշել է մատեանի ստացողներից Սարգիս կրօնաւորը։ Թերեւս նոյն վանքի սպասաւորներից է եղել նաեւ 1429 թ. ձեռագրի 111ա-116բ էջերը լրացրած գրիչ Մաթէոսը, որը թողել է հետեւեալ մէկտողանի գրութիւնը. «Զմե-

85-87:

[16] Մեծոփեցու կեանքի, ուսման եւ գործունէութեան մանրամասների համար տե՛ս **Յովսէփեան Գ. Վրդ.**, Թովմա Մեծոփեցու կեանքը (կենսագրական նոր նիւթերով), Վաղարշապատ, էլեկտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1914:

[17] ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), էջ 106:

[18] **Մաթեւոսեան Ա.**, Մեծոփավանքի գրչութեան կենտրոնը (ԺԲ-ԺԵ դդ.), Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 67:

[19] Նոյն տեղում, էջ 65:

[20] **Մաթեւոսեան Ա.**, Երեւանի գրչութեան կենտրոնները, էջ 116:

[21] Համալիրի մասին տե՛ս **Մխիթարեան Ս.**, Միջնադարեան Գետարգելի (Զագավանքի) պատմութիւնը, Երեւան, «Անհա պոլիգրաֆ», 2014: Վանքի վիմական ժառանգութիւնը մանրամասն քննուած է **Ս. Կարապետեանի** Առինջ գիւղի պատմական յուշարձանները (Երեւան, 2015) գրքում: Տե՛ս նաեւ **Գասպարեան Ռ.**, Զագավանքի համալիրը եւ նրա վիմագրերը, «Պատմա-բանասիրական հանդէս», 2007, թիւ 1, էջ 198-217:

[22] Ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ, կազմեցին՝ **Քէօշկերեան Ա.**, **Սուքիասեան Կ.**, **Քեօսէեան Յ.**, խմբագրութեամբ՝ **Անթաբեան Փ.**, **Քեօսէեան Յ.**, **Ղազարոսեան Ա.**, **Հայրապետեան Տ. Շահէ Քհնյ.**, ցանկերը կազմեց՝ **Դեւրիկեան Վ.**, «Նայիրի» հրատ., ԵՊՀ հրատ., Երեւան, 2008, սիւն 337-342:

[23] ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), էջ 334:

[24] Վանական համալիրի ձեռագրական ժառանգութեան վերաբերեալ տե՛ս **Յարութիւնեան Ա.**, Հին Երեւանի եւ նրա ներկայ արուարձանների եկեղեցիներն իբրեւ գրչութեան կենտրոններ, էջ 473-476:

ղուցեալ գրիչ զՄաթէոս աղաչեմ յիշել ի Տէր։ Թվին ՊՀԸ. (1429)»[25]։

Ըստ ամենայնի՝ կրկին նոյն Ստեփանոսն է (յիշատակարանում՝ Ստեփանոս Վարագեցի) գրչագրել Մաշտոցեան Մատենադարանում պահուող եւ երեք առանձին միաւորներից բաղկացած Հմր 530 ձեռագրի անթուական Բ. միաւորը, որը պարունակում է Առաքել Սիւնեցու «Յաղագս քերականութեան համառաւտ լուծմունք» երկը (78ա-116բ)[26]։ Լեւոն Խաչիկեանը, նկատառելով գրչից մեզ յայտնի նախորդ ձեռագիրը, անթուական այս յիշատակարանը տեղադրել է 1425 թ. յիշատակարանների շարքում։ Այս թուագրրման հարցում, սակայն, մենք մի վերապահում ունենք. անթուական այս յիշատակարանի, այդպիսով նաեւ քննուող մատեանի գրչութեան մօտաւոր թուականի ճշտման հարցում կարեւոր նշանակութիւն ունեն գրչի երկու յիշատակարաններում նշուած անձինք, իսկ աւելի ստոյգ՝ վանքի առաջնորդների եւ ռաբունապետների անունները։ Այսպէս, 1425 թ. Ստեփանոս գրիչը յիշատակում է մատեանի պատուիրատու-ստացող Դաւիթ վանահօրը, մինչդեռ իր միւս՝ ՄՄ Հմր 530 ձեռագրի անթուական յիշատակարանում վանքի առաջնորդը Սարգիս Վարդապետն է՝ «Այլ եւ յիշեսցիք ի սուրբ յաղաւթս ձեր զկենդանի նահատակն՝ զՍարգիս վարդապետն՝ զառաջնորդ սուրբ ուխտիս»[27]։ Ըստ այսմ՝ երկու ձեռագրերի գրչագրումը միեւնոյն թուականի տակ դնելը, թերեւս, ճիշտ չէ։

Արդ, նկատենք, որ Զագավանքի նշուած առաջնորդ Սարգիս Վարդապետը, ըստ Թովմա Մեծոփեցու «Պատմագրութեան», 1441 թ. մասնակցել է Կիրակոս Կաթողիկոսի օծմանը[28]։ Միւս կողմից՝ գիտենք նաեւ, որ 1425 կամ 1426 թուականից մինչեւ 1428 թ. Զագավանքի ռաբունապետ է եղել Գրիգոր Տաթեւացու աշակերտ, ժամանակակիցներից «քաջ հռետոր», «քաջ եկլեստիատես Հայոց» եւ նման այլ պատուանուններ ստացած Սիմէոն Տաթեւացի վարդապետը, որը մինչ այդ հասցրել էր արդէն իր գործունէութեամբ հռչակուել Եղուարդում եւ Այրիվանքում (Գեղարդ)[29]։ Զագավանքում հաստատուելուց յետոյ Սիմէոն ռաբունապետը աչքի է ընկել եկեղեցական կարգերի վերահաստատմամբ, այլեւ շինարարական գործունէութեամբ. պարսպապատել է վանական համալիրը, խաչքարեր կանգնեցրել, նոր եկեղեցի կառուցելու ծրագրեր ունեցել, սակայն 1428 թ. վախճանուել է եւ ամփոփուել վանքի մերձակայքում[30]. «Եհաս հրաման յԱրարչէն կոչել զվարդապետն առ ինքն, ի թուիս ՊՀէ. (1428)» - նշւում է նրա մասին պատմուող մի յիշատակարանում[31]։ Ի դէպ, հէնց այստեղ՝ Զագավանքում, 1427 թ. ռաբունապետը նաեւ մի Յայսմաւուրք մատեան է ընդօրինակել եւ ընծայել Յովհաննավանքի Սուրբ Կարապետ եկեղեցուն։ Այդ նուիրատուութիւնը փաստագրուած է նոյն եկեղեցու աւագ խորանի արձանագրութեամբ[32]։

Դառնալով ՄՄ Հմր 530 ձեռագրի գրչութեան ժամանակին՝ պէտք է ընդգծել, որ

---

[25] Ժե. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), էջ 335: Ձեռագրի նկարագրութեան մէջ վրիպմամբ ՊՀԸ. թուականը վերծանուել է 1425 ձեւով, տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Դ, սիւն 341:

[26] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, սիւն 1157-1159:

[27] Ժե. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), էջ 336:

[28] **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրութիւն, աշխատասիրութեամբ **Խաչիկեան Լ.**, «Մագաղաթ» հրատ., Երեւան, 1999, էջ 219:

[29] Նշանաւոր այս վարդապետի եւ նրա գործունէութեան վերաբերեալ մանրամասն տե՛ս **Սաղումեան Ս. Տ.**, Սիմէոն ռաբունապետ Տաթեւացի, «Լրաբեր» հաս. գիտ., 1975, թիւ, 6, էջ 77-85: **Գասպարեան Ռ.**, Սիմէոն ռաբունապետ Տաթեւացին եւ նրա գործունէութիւնը Զագավանքում, «Լրաբեր» հաս. գիտ., 2005, թիւ 3, էջ 174-182:

[30] **Կարապետեան Ս.**, Առինջ գիւղի պատմական յուշարձանները, էջ 41:

[31] Ժե. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), էջ 562:

[32] **Ղաֆադարեան Կ.**, Յովհաննավանքը եւ նրա արձանագրութիւնները, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1948, էջ 79, արձ. 11:

անթուական յիշատակարանում վանքի բաբունապետ է նշուած ոչ թէ Սիմէոն Տաթեւացին, այլ վանքի արդէն հանգուցեալ բաբունապետ՝ Առաքել Վարդապետը, որը, թերեւս, յաջորդել է Սիմէոն բաբունապետին՝ «յիշեսցիք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր զերջանիկ բաբունապետն զտէր Առաքել կոչեցեալ՝ զհանգուցեալն ի Քրիստոս»[33]։ Համադրելով նշուած փաստերը՝ կարծում ենք, որ Ստեփանոս գրչից մեզ յայտնի այս երկրորդ ձեռագիրն ընդօրինակուել է 1440-ական թուականների սկզբներին՝ կաթողիկոսական օծմանը մասնակցած Սարգիս Վարդապետի վանահայրութեան օրօք։

*Ընդօրինակուած այս երկու գրչագրերում էլ Ստեփանոսի ձեռքը հաստատուն է, տառերը՝ կոկիկ բոլորգրով։ Գրչի յիշատակարաններն էլ իրենց հերթին աչքի են ընկնում գրագէտ շարադրանքով։ Հմր 530 ձեռագրի գրչութիւնն առանձնանում է նաեւ իր առատ համառօտագրութիւններով (**նկ. 2**)։ Կարելի է ասել, որ Ստեփանոս Վարագեցին բաւական հմուտ եւ վարժ է եղել գրչարուեստում, եւ շատ հաւանական է, որ նրա ձեռագրական ժառանգութիւնը չի սահմանափակւում մեզ ծանօթ այս երկու ձեռագրով։*

Ստեփանոս Վարագեցուն ժամանակամերձ է նրա անուանակից, ԺԵ. դարավերջի եւ ԺԶ. դարասկզբի եկեղեցական գործիչ, արդիւնաշատ գրիչ, ծաղկող եւ շնորհալի քանդակագործ Ստեփանոս Եպիսկոպոս Առնջեցին։ Տեղանուանացոյց իր մականունը Ստեփանոս գրիչն ստացել է Առինջ գիւղի հիւսիսային եզրին երբեմնի կանգուն եւ բարգաւաճ Սուրբ Աստուածածին եկեղեցու հովանու ներքոյ[34] ծաւալած իր բեղմնաւոր գործունէութեան շնորհիւ[35]։ Նրա ընդօրինակած կամ ծաղկած եւ մեզ յայտնի ձեռագրերի թիւն անցնում է մէկ տասնեակից։ Ինչպէս նկատել է հայ գրչարուեստի քաջագիտակ Յարութիւն Քիւրտեանը, Ստեփանոսը տաղանդաւոր եւ վարժ գծագրիչ է եղել[36]։ Արուեստաբան Աստղիկ Գէորգեանը նոյնպէս բարձր է գնահատել Առնջեցու մանրանկարչական շնորհքը[37]։ Այս ամէնով հանդերձ, Ստեփանոս Եպիսկոպոսի գրչարուեստը դեռեւս բաւարար չափով ուսումնասիրուած չէ, մինչդեռ կարելի է վստահօրէն ասել, որ նրա համբաւը միայն Առինջով չի սահմանափակուել. դատելով յիշատակարանային տեղեկութիւններից՝ ծաղկման նպատակով Առնջավանք են բերուել նաեւ այլ վայրերում ընդօրինակուած ձեռագրեր։ Դրանցից է 1494 թ. Դէմդէմաշէնի (իմա՛ Դդմաշէն) Սուրբ Աստուածածին եկեղեցու հովանու ներքոյ Ազարիա գրչի ընդօրինակած Աւետարանը (ՄՄ Հմր 4155)։ Վերջինիս յիշատակարանից տեղեկանում ենք, որ ձեռագիրը 1495 թ. ծաղկել է Ստեփանոսը՝ Առնջավանքի Սուրբ Աստուածածին եկեղեցում. «Նկարեցաւ համաբարբառս եւ Աւետարանս ձեռամբ Ստեփանոս եպիսկոպոսի յԱռընջեցւոյ, ի դուռս սուրբ Մարիամ Աստուածածնիս»[38]։ Հարկ է նկատել, որ իր հերթին Առնջեցին, շրջելով այլ սրբավայրերում, դրանց հովանու ներքոյ եւս ընդօրինակել կամ ծաղկել է տարբեր մատեաններ։ Այդպիսի մի օրինակ է 1496 թ. գրչագրուած ՄՄ Հմր 6352 Աւետարանը, որի ծաղկումն Առնջեցին կատարել է «ի վանքս Գաւառան, ի դուռս Սուրբ Սարգսի զաւրավարիս»[39]։

---

[33] ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն առաջին (1401-1450 թթ.), էջ 336:

[34] Վանքի մասին տե՛ս **Կարապետեան Ս.**, Առինջ գիւղի պատմական յուշարձանները, էջ 25-30:

[35] **Ծովական (Պողարեան) Ն. Արք.**, Հայ նկարողներ (ԺԱ.-ԺԷ. դար), Երուսաղէմ, տպ. Սբ. Յակոբեանց, 1989, էջ 128-131, **Յարութիւնեան Ա.**, Հին Երեւանի եւ նրա ներկայ արուարձանների եկեղեցիներն իբրեւ գրչութեան կենտրոններ, էջ 474-475:

[36] **Քիւրտեան Յ.**, Ստեփանոս եպիսկոպոս յԱռընջեցի նկարող (1477), «Հասկ», թիւ 7-8, Անթիլիաս, 1951, էջ 238:

[37] **Գէորգեան Ա.**, Հայ մանրանկարիչներ. մատենագիտութիւն (IX-XIX դդ.), էջ 706-708:

[38] ԺԵ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմեց **Խաչիկեան Լ. Ս.**, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1967, էջ 200:

[39] **Յարութիւնեան Ա.**, Հին Երեւանի եւ նրա ներկայ արուարձանների եկեղեցիներն իբրեւ գրչութեան կենտրոններ, էջ 475:

Առնջավանքի տարածքում կան նաեւ վիմագիր յուշարձաններ, որոնցից առնուազն երկուսը՝ մէկ խաչքար եւ Յովհաննէս աւետարանչին խորհրդանշող արծուի մէկ բարձրաքանդակ, դարձեալ կերտել է Ստեփանոս Եպիսկոպոսը՝ այդ մասին թողնելով համապատասխան արձանագրութիւններ[40]։ Վստահ ենք, որ առաջիկայ ուսումնասիրութիւնները լոյս կը սփռեն Ստեփանոս Եպիսկոպոս Առնջեցու ձեռագրական գործունէութեան եւ յատկապէս, նրա մանրանկարչական արուեստի վրայ[41]։

Առաջ անցնելով՝ նկատենք, որ Առնջավանքում գրչութիւնը շարունակուել է մինչեւ ԺԷ. դար եւ ընդհատուել 1679 թ. կործանարար երկրաշարժի պատճառով, որի հետեւանքով վանքը գրեթէ ամբողջութեամբ փլատակների է վերածուել։ ԺԷ. դարի տեղի գրիչներից յայտնի են Յակոբ Վարդապետը, Մարինոսը եւ Մարիամը։ Նրանցից առաջինը 1626 թ. 77 տարեկան հասակում ընդօրինակել եւ ծաղկել է մի Աւետարան, որի երբեմնի գոյութեան մասին տեղեկանում ենք ժամանակին արուած մի նկարագրութեան շնորհիւ միայն[42]։ Դատելով Աւետարանի յիշատակարանում մէկ անգամ գործածուած «կու աշխատին» բայաձեւից՝ կարելի է ենթադրել, որ Յակոբ Վարդապետը ծագումով տեղացի չի եղել. «կու» եղանակիչը, որով այս պարագայում կազմուել է սահմանական եղանակի ներկայ ժամանակը, խորթ է արարատեան բարբառին։ Միւս կողմից՝ դժուար է ասել նաեւ, թէ ծագումով որտեղից կարող էր լինել գրիչը, քանի որ նշուած եղանակիչը միաժամանակ յատուկ է հայերէնի արեւմտեան մի շարք բարբառների[43]։ Մէջբերում ենք յիշատակարանի այդ հատուածը. «Դարձեալ յիշեցէք զՎարդիկն եւ ամուսին իւր՝ զՄանիշակն, որ կու աշխատին վանիցս վերայ»[44]։ Յակոբ գրիչն իր յիշատակարանում երախտագիտութեամբ նշում է նաեւ Երեւանի Սուրբ Անանիա առաքեալի անապատում հաստատուած եւ այստեղ նշանակալի գործունէութեամբ աչքի ընկած «տիեզերալոյս» Մովսէս Վարդապետին (նրա մասին տե՛ս ստորեւ), քանի որ մատեանի ընդօրինակման համար թուղթը նրանից է ստացել. «Դարձեալ յիշեցէք զտիեզերալոյս վարդապետն մեր՝ զՄովսէս, որ այս սուրբ Աւետարանիս թուղթն նա շնորհեաց»[45]։

Ուշագրաւ է յատկապէս 1650 թ. Առնջավանքի Սուրբ Աստուածածին եկեղեցու հովանու ներքոյ Մարինոս եւ Մարիամ գրչուհիների գործունէութիւնը։ Նրանց ընդօրինակութեամբ մեզ յայտնի է միայն ՄՄ Հ՝ 684 «Հարանց վարք» մատեանը, որի յիշատակարանը միաժամանակ վկայում է նշեալ վանքում բնակուող միանձնուհիների մասին. «Արդ, գրեցաւ սա ի դառն եւ ի տրտում ժամանակի, ի գեղ Առընջու, ի դուռն Սուրբ Աստուածածնի, ի գումարս ***կուսան կանանց****, ի թվականի ՌՂ եւ Թ (1650)», - կարդում ենք ձեռագրի յիշատակարանում (ընդգծումը մերն է - **Խ. Յ.**)[46]։ Այս եզակի վկայութիւնից կարելի է ենթադրել, որ առնուազն մի կարճ ժամանակահատուած Առինջի*

---

[40] **Կարապետեան Ս.**, Առինջ գիւղի պատմական յուշարձանները, էջ 25-26: **Գասպարեան Ռ.**, Միջնադարեան Առինջ գիւղը եւ նրա վիմական յուշարձանները, «Հանդէս ամսօրեայ», 2005, թիւ 1-12, սիւն 321-322:

[41] Տեղեակ ենք, որ արուեստաբան Աշխէն Ենոքեանը ներկայում պատրաստում է Առնջեցու ձեռագրական ժառանգութեանն առնչուող առանձին յօդուած:

[42] **Քօսեան Հ. Յ.**, Ցուցակ հայերէն ձեռագրաց Կարնոյ գիւղերու, «Հանդէս ամսօրեայ», 1964, թիւ 4-6, սիւն 158-160: Տե՛ս նաեւ Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1621-1640 թթ.), հ. Բ, կազմեցին՝ **Յակոբեան Վ.**, **Յովհաննիսեան Ա.**, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1978, էջ 225-226:

[43] **Աճառեան Հ.**, Հայ բարբառագիտութիւն, «Էմինեան ազգագրական ժողովածու», հ. Ը., Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, ընդհանուր ակնարկը տե՛ս *Հայերէն բարբառներու երեք ճիւղերը*, իսկ բուն կը ճիւղի մէջ մտնող բարբառների եւ նրանց լեզուաբանական առանձնայատկութիւնների մասին՝ *ԿՀ ճիւղ* գլուխները, համապատասխանաբար էջ 34-35 եւ 103-279:

[44] Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ, հ. Բ, էջ 226:

[45] Նոյն տեղում, էջ 226:

[46] Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ (1641-1660 թթ.), հ. Գ, կազմեց **Յակոբեան Վ.**, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, էջ 387:

Սուրբ Աստուածածինը եղել է նաեւ կուսանաց անապատ[47]։ Հաւանաբար, այդ պէտք է եղած լիներ 1626 թ. յետոյ, քանի որ վերոյիշեալ Յակոբ Վարդապետն այս մասին որեւէ բան չի յայտնում։ Ըստ ամենայնի՝ կուսանաց անապատը գործել է 1630-ական թթ. մինչեւ 1679 թ. երկրաշարժը։

*Յաւօք, միանձնուհիների, ինչպէս նաեւ նրանց թուաքանակի մասին այլ տեղեկութիւններ չեն հաղորդւում նշեալ յիշատակարանում, սակայն այն փաստը, որ նրանցից առնուազն երկուսը գրչութեամբ են զբաղուել (Մարիամ գրիչը նաեւ թուղթ է կոկել), վկայում է, որ Առնջավանքի ուշմիջնադարեան գրչօջախում գործել են նաեւ կին գրիչներ։ Ի հարկէ, հայկական գրչարուեստում գրչուհիների ներգրաւուածութիւնն ինքնին նորոյթ չէ[48], սակայն Երեւանում եւ նրա մերձակայ գրչօջախներում ձեռագրաստեղծ գործունէութիւն ծաւալողների մէջ Մարիամն ու Մարինոսը իգական սեռի մեզ ծանօթ միակ ներկայացուցիչներն են։ Ըստ որում՝ շատ հաւանական է, որ վերոյիշեալ Մարիամն է նաեւ ՄՄ Հմր 3424 Ժողովածուի Ա. միաւորի աւարտին տեղ գտած փոքրիկ յաւելագրութեան գրիչը։ Չորս տարբեր միաւորներից բաղկացած մատենադարանեան նշեալ ձեռագրի 142ա-153ա էջերին վերջինս յաւելել է մէկ տաղ եւ երկու գանձ, իսկ իր անունն ու գրչավայրը արձանագրել հետեւեալ սեղմ յիշատակարանում[49]. «Գրեցաւ տաղս այս ի Երեւան, ձեռամբ տրուպ Մարիամին, թվին ՌՁԱ (1632) ամի, մարտի Գ (3), աւրն շաբաթի»[50]։ Հմր 684 եւ 3424 ձեռագրերի Մարիամ անունով գրիչների նոյնացման հիմքում ոչ միայն անունների եւ ժամանակաշրջանի համընկնումներն են, այլեւ մատեանների հնագրական կողմի համեմատութիւնը. երկու դէպքում էլ ընդօրինակութիւնները նօտրգրով են եւ աչքի չեն ընկնում համաչափ ու կոկիկ գրչութեամբ։ Հմր 3424-ում գիրը նաեւ բաւական խոշոր է, որն ինչ-որ առումով յատուկ է դեռեւս անվարժ եւ սակաւափորձ գրիչներին (**Նկ. 3 եւ 4**)։ Յաւօք, հնարաւոր չէ յստակ ասել, թէ Երեւանի որ գրչավայրում է Մարիամն իրականացրել այսօր նշեալ մատեանի մաս հանդիսացող միաւորի ընդօրինակութիւնը։*

Դառնալով գրիչների թուարկման մեր ժամանակագրութեանը՝ նշենք, որ Երեւանի եւ երեւանամերձ ձեռագրաստեղծ օջախներում գրչութիւնն անխափան կերպով շարունակուել է ԺԵ-ԺԶ. դարերում։ Տարբեր կենտրոններում գործել են մի շարք գրիչներ ու ծաղկողներ, որոնց ընդօրինակութիւններից, ցաւօք, մեզ հասել են միայն հատուկենտ օրինակներ։ Մասնաւորապէս, 1450 թ. Երեւանի Սուրբ Անանիա առաքեալի անապատում Յովհաննէս անունով գրիչը «Ի խնդրոյ բարեմիտ եւ սրբասէր քահանային Մարգարայ երիցուն եւ իւր որդւոյն՝ Ներսէս քահանային» ընդօրինակել է մի Գանձարան, որը միայն ժամանակին արուած նկարագրութեամբ է այսօր մեզ յայտնի։ Գանձարանի յիշատակարանի համաձայն՝ մատեանն ընդօրինակուել է «ի փոքրիկ անապատիս Երեւանայ, ընդ հովանեաւ ամենազօր Սուրբ առաքելոց գերեզմանի»[51]։

---

[47] Թէեւ սոյն յիշատակարանը ծանօթ է անուանի յուշարձանագէտ Ս. Կարապետեանին, սակայն այս փաստը, կարծես թէ, վրիպել է նրա ուշադրութիւնից, հմմտ. **Կարապետեան Ս.**, Առինջ գիւղի պատմական յուշարձանները, էջ 26:

[48] Տե՛ս **Մկրտչեան Հ.**, Հայկական ձեռագրերի յիշատակարանները կանանց մենաստանների եւ կուսակրօն կանանց վերաբերեալ, «Էջմիածին», 2012, թիւ 12, էջ 102-110, 2013, թիւ 2, էջ 89-101: Տե՛ս նաեւ **Յարութիւնեան Խ. Ա.**, Հայերէն ձեռագրերի յիշատակարանները, Երեւան, Մատենադարան, 2019, էջ 116-117:

[49] Այս տեղեկութիւնը քաղել ենք ձեռագրի անտիպ նկարագրութիւնից, որը մեզ է տրամադրել Մաշտոցեան Մատենադարանի Ձեռագրագիտութեան բաժնի վարիչ եւ գլխաւոր աւանդապահ, պ. գ. դ. Գէորգ Տէր-Վարդանեանը: Հմմտ. նաեւ Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ **Եգանեան Օ.**, **Ջէյթունեան Ա.**, **Անթաբեան Փ.**, ներածութիւնը՝ **Եգանեան Օ.**, խմբագրութեամբ՝ **Խաչիկեան Լ.**, **Մնացականեան Ա.**, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1965, սիւն 1009:

[50] Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ, հ. Բ, էջ 471:

[51] **Մուրատեան Ս. Ա.**, **Մարտիրոսեան Ն. Պ.**, Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Թարգմանչաց վանքի եւ շրջակայից, խմբագրեց՝ **Ա. Գալայճեան**, Երուսաղէմ, տպ. Սբ. Յակոբեանց, 1967, էջ 113: Ամենայն հաւանակա-

Իգնատիոս անունով մէկ այլ գրիչ ներկայիս Երեւանի արուարձաններից Քանաքեռի Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Յակոբ Տեառնեղբօր (վերակառուցուած 1679 թ. երկրաշարժից յետոյ) եկեղեցիների հովանու ներքոյ 1496 թ. ընդօրինակել է մի Աւետարան, որի ծաղկումն ընդօրինակումից մէկ տարի անց իրականացրել է մեզ արդէն ծանօթ Ստեփանոս Եպիսկոպոս Առնջեցին։ Գրչի յիշատակարանում կարդում ենք. «Բայց գրեցաւ սա ի սուրբ ուխտս ի Քանայգեռոյ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Յակոբ տեառնեղբաւր»[52]։ Քանաքեռում է 1543 թ. ձեռագրի ընդօրինակումն սկսել Գրիգոր կրօնաւորը՝ աշխատանքն աւարտելով արդէն Հաւուց թառի Սուրբ Ամենափրկիչ եւ Սուրբ Աստուածածին եկեղեցիների հովանու ներքոյ (ՄՄ Հմր 5614)[53]։ Քանաքեռում գրչագրուած յաջորդ եւ վերջին ձեռագրի գրիչը Յովհաննէս է։ Այս գրչից նոյնպէս մեզ յայտնի է միայն մէկ ընդօրինակութիւն։ Այն պարունակում է հայ եկեղեցու նշանաւոր հայրապետներից Ներսէս Շնորհալու չափածոյ գործերը՝ «Բանք չափաւ» ժողովածուն (ՄՄ Հմր 1550)։ Յովհաննէս գրիչը մատեանն ընդօրինակել է 1632 թ., եւ ուշագրաւ է, որ յիշատակարանում որպէս գրչավայր, նշուած է Սուրբ Ստեփանոս անունով մի եկեղեցի, որի մասին տեղեկութիւններ չեն պահպանուել գրաւոր այլ աղբիւրներում. «Արդ, գրեցաւ եղանակաւոր գիրքս, որ կոչի Յիսուս Որդի, ձեռամբ մեղապարտ Յոհանիսին, ի թուականութեանս Հայոց Ռ եւ ՁԱ (1632)... ի գաւառս յԱրարատեան, ի գիւղաքաղաքս, որ կոչի Քանաքեռ, ընդ հովանեաւ Սուրբ Ստեփանոսի, առ ի յիշատակ հոգոյ իմոյ եւ վայելումն Սուրբ Աստուածածնիս»[54]։ Ըստ էութեան՝ Յովհաննէս գրչի այս եզակի յիշատակարանով փաստագրւում է Քանաքեռում Սուրբ Ստեփանոս անունով սրբավայրի երբեմնի գոյութիւնը, որը, ինչպէս արդարացիօրէն ենթադրել է վիմագրագէտ Ա. Յարութիւնեանը, փլուզուած պէտք է լինի 1679 թ. երկրաշարժի հետեւանքով[55]։

ԺԶ. դարից մեզ յայտնի է եւս մէկ ձեռագիր մատեան։ Երեւանի միաժամանակ մի քանի սրբավայրերի՝ Կաթողիկէ Սուրբ Աստուածածնի, Գեթսեմանի Սուրբ Յարութեան, Երկուերեսնիի (Սուրբ Պօղոս-Պետրոս) յիշատակումով 1537 թ. Մարգար դպիրն ընդօրինակել է մի Մաշտոց, որն այսօր պահւում է Ֆրանսիայի ազգային գրադարանում (ՖԱԳ Հմր 59/26A)։ Ձեռագրի յիշատակարանում իր հարազատներին, մատեանի ստացող Եսայի Վարդապետ Ուրծեցուն եւ նրա ազգականներին նշելուց բացի՝ գրիչն անուանապէս յիշատակել է նաեւ Երեւան քաղաքի մի շարք հոգեւորականների, բարձր գնահատել նաեւ իր ուսուցիչ՝ Ղուկաս րաբունապետին. «Եւ դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զուսուցիչն մեր զՂուկաս քաջ րաբունապետն, որ շատ երախտիք ունի ի վերա մեր, զվարձս յԱստուծոյ առցէ. ամէն»[56]։

Երեւանի եւ նրա մերձակայքի ձեռագրական կենտրոններում գրչարուեստի իսկա-

---

նութեամբ՝ սպասելի «առաքելոյ» ձեւի փոխարէն «առաքելոց» գրութիւնը հետեւանք է գրչական վրիպումի կամ նկարագրութեան ընթացքում յ եւ ց տառերի շփոթի։

[52] ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, մասն երրորդ (1481-1500 թթ.), էջ 227։

[53] **Մաթեւոսեան Կ.**, Հաւուց թառի վանքը, «Մուղնի» հրատ., Երեւան, 2012, էջ 40։

[54] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե., կազմեցին՝ **Եգանեան Օ.**, խմբագրութեամբ՝ **Քեսէեան Յ.**, **Ղազարոսեան Ա.**, **Հայրապետեան Տ. Շահէ Քհնյ.**, ցանկերը կազմեց՝ **Դեւրիկեան Վ.**, «Նայիրի» հրատ., ԵՊՀ հրատ., Երեւան, 2009, սիւն 450։ Տե՛ս նաեւ Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ, հ. Բ, էջ 478։

[55] **Յարութիւնեան Ա.**, Հին Երեւանի եւ նրա ներկայ արուարձանների եկեղեցիներն իբրեւ գրչութեան կենտրոններ, էջ 473։

[56] **Kévorkian R. H., Ter-Stépanian A.**, avec le concours de **Outtier B.** et **Ter-Vardanian G.**, Manuscrits armeniéns de la Bibliotheque nationale de France, catalogue, BNF, Paris, 1998, col. 109. Ձեռագրի մասին տե՛ս նաեւ **Յարութիւնեան Ա.**, Հին Երեւանի եպիսկոպոսանիստ եկեղեցին. Երկուերեսնի-Ս. Պօղոս-Պետրոս, Ս. Էջմիածին, «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատ.» (հրատարակման ընթացքում է)։

կան վերազարթօնք է նկատւում ԺԷ. դարում։ Բաւական է ասել, որ եթէ նախորդած դարաշրջաններում այս կենտրոններում կամ դրանց հովանու ներքոյ ընդօրինակուած կամ ծաղկուած եւ մեզ յայտնի ձեռագրերի թիւը մօտենում է երկու տասնեակին, ապա միայն ԺԷ. դարով թուագրուող ձեռագրերի թիւը գրեթէ հինգ տասնեակ է, որոնց գերակշիռ մասը ստեղծուել է՝ 1620-ական թթ. յետոյ։

*Երեւանի եւ երեւանամերձ տարբեր եկեղեցիներում ԺԷ. դարի ընթացքում գըրչարուեստի այս վերելքը պայմանաւորուած էր ոչ միայն ժամանակի պատմական-քաղաքական, այլեւ կրթամշակութային կեանքի համար բարենպաստ պայմանների առկայութեամբ[57]։ Դարասկզբի շահաբասեան դաժան տեղահանութիւններից ու աւերածութիւններից յետոյ Արարատեան դաշտի բնակչութեան համար, կարծես, շունչ քաշելու եւ վերականգնուելու հնարաւորութիւն էր ստեղծուել բոլոր ուղղութիւններով, այդ թւում՝ հոգեւոր եւ մշակութային խաթարուած կեանքը նորոգելու տեսանկիւնից։ Այս հարցում նշանակալի է եղել յատկապէս ԺԷ. դարի 20-ական թթ. Երեւանի Սուրբ Անանիա առաքեալի անապատում հաստատուած եւ տեղում լուսաւորչական արդիւնաշատ գործունէութիւն ծաւալած Մովսէս Վարդապետ Սիւնեցու (ապագայ կաթողիկոս՝ Մովսէս Գ. Տաթեւացի, 1629-1632 թթ.) դերը[58]։ Վերջինիս գործուն ջանքերով, եկեղեցաշէն, քարոզչական ու վանական կարգերի հաստատման աշխատանքներից զատ, տեղում հիմնուել են միաբանութիւն եւ դպրոց, ուր սովորելու են եկել Հայոց աշխարհի ամենատարբեր անկիւններից։ Ժամանակի հայերէն գրաւոր բոլոր աղբիւրներում Մովսէս Վարդապետի գործունէութիւնը ներկայացուած է բացառապէս դրուատական խօսքերով. հասարակ ժողովուրդը, ձեռագրերի գրիչները, ժամանակի մատենագիրները բարձր են գնահատել վարդապետին եւ նրա աշխատանքը[59]։ Ինչպէս վկայում է ժամանակի պատմագիր Առաքել Դաւրիժեցին, Մովսէս Վարդապետի քարոզները ժողովուրդը խանդավառութեամբ էր ընդունում եւ կատարում. «Իսկ զքարոզութիւն Մովսէս վարդապետին ամենայն ժողովուրդք խնդութեամբ ընդունէին եւ յօժարութեամբ կատարէին»[60]։ Պօղոս Տիվրիկեցի գրիչը 1623 թ. Սուրբ Անանիա առաքեալի անապատում ընդօրինակած Գրիգոր Տաթեւացու «Քարոզգիրք» մատեանի (ՄՄ Հմր 5243) յիշատակարանում սիրելի ուսուցիչ Մովսէս Վարդապետին բնորոշում է «սրբասնունդ եւ ճգնազգեաց, տիեզերալոյս րաբունապետ» մակդիրներով[61]։ Նոյն վայրում եւ նոյն ժամանակ ձեռագրաստեղծ գործունէութիւն է ծաւալել նաեւ Զաքարիա Աբեղայ էջմիածնեցի գրիչը (յետագայում՝ Յովհաննավանքի առաջնորդ Զաքարիա Վրդ. Վաղարշապատցի), որի ընդօրինակութեամբ մեզ յայտնի են երկու տարբեր մատեաններ (**նկ. 5**)։ 1623 թ. Երեւանի Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Անանիա սրբավայրերի հովանու ներքոյ գրչագրած Ժողովածուի (ՄՄ Հմր 9147) յիշատակարանում Զաքարիա Աբեղան դարձեալ գովեստի խօսքերով եւ գեղեցիկ մակդիրներով է բնութագրում իր ուսուցչին՝ թուարկելով նաեւ նրա գործունէութիւնից մի հատուած. «Սուրբ հայրս մեր Մովսէս վարդապետս <սայ>, կարգեաց անապատաւորս ի մերում ժամանակի։ Սայ բաժանեաց զկրօնաւորս ի յաշխարհական ձեւէ եւ հանդերձէ։ Սայ զկանոնս նախահարցն հաստատեաց՝ զեպիսկոպոսունս, զերիցունս եւ զսարկաւագունս եւ զայլ եւթն խորհուրդ եկեղեցոյ մի ըստ միոջէ ուսուցանէր»[62]։*

---

[57] **Յակոբեան Թ. Խ.**, Երեւանի պատմութիւնը (1500-1800 թթ.), էջ 377-421։

[58] **Մաթեւոսեան Ա.**, Երեւանի գրչութեան կենտրոնները, էջ 117։

[59] Այս մասին առաւել մանրամասն տե՛ս **Յարութիւնեան Ա.**, Երեւանի Ս. Անանիա առաքեալի անապատը կամ Զօրաւոր Ս. Աստուածածին եկեղեցին, էջ 39-47։

[60] **Առաքել Դաւրիժեցի**, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ՝ **Խանլարեան Լ. Ա.**, ՀԳԱ հրատ., Երեւան, 1990, էջ 241։

[61] Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ, հ. Բ, էջ 95։

[62] Նոյն տեղում, էջ 99։

Առաւել ուշագրաւ եւ արժէքաւոր է 1625 թ. Զաքարիա գրչի մէկ այլ ձեռագրի (Հմր 507) յիշատակարանը, որում գրիչն անուանապէս յիշատակում է Մովսէս Վարդապետի շուրջ երկու տասնեակ աշակերտներին, այդ թւում՝ Տէր Պօղոսին, Տէր Մինասին, Տէր Խաչատուրին, Տէր Առաքելին, Եսայի Սարկաւագին, որոնք մեզ յայտնի են նաեւ իրենց ընդօրինակած ձեռագրերով։ Յիշատակւում են նաեւ մատեանի համար թուղթ կոկած Հայրապետ միայնաւորը եւ տողերը խազած Մկրտիչը[63]։ Վերը նշուած Եսայի Սարկաւագը 1625 թ. դարձեալ Սուրբ Անանիայի անապատում ընդօրինակած Ժողովածուի (ՄՄ Հմր 1538) յիշատակարանում անդրադարձել է Մովսէս Վարդապետի նկատմամբ Երեւանի կառավարիչ Ամիրգունա խանի սիրալիր վերաբերմունքին եւ նրա թոյլտուութեամբ Սուրբ Անանիա առաքեալի անապատում միաբանութիւն ու դպրոց հաստատելուն՝ գրելով. «Եւ գնացեալ անդ վարդապետս նորոգեաց եւ ժողովեալ բազում աշակերտս եւ կրօնաւորս եւ միայնակեացս եւ կարգեաց դպրոց»[64]։

Նոյն գրչօջախում են ընդօրինակուել նաեւ ՄՄ Հմր 4058 եւ 6322 ձեռագիր մատեանները։ Դրանցից առաջինը Ժամագիրք, Սաղմոսարան եւ Տօնացոյց պարունակող ծիսական ժողովածու է, որը 1626 թ. գրչագրել է վերեւում յիշուած Տէր Մինասը, իսկ երկրորդը դարձեալ վերեւում յիշուած Առաքել եւ Խաչատուր գրիչների համատեղ աշխատանքն է՝ իրականացուած նոյն թուականին, եւ պարունակում է «Վարք սրբոց» երկի ընդօրինակութիւնը։

Ընդհանուր առմամբ՝ Երեւանի Սուրբ Անանիա առաքեալի անապատում ընդօրինակուած եւ մեզ յայտնի ձեռագրերի թիւն անցնում է մէկ տասնեակից, որոնցից միայն 8-ը վերաբերում են 1620-1660 թթ., այսինքն՝ այս գրչօջախի առաւել ծաղկուն շրջափուլին[65]։ Կարելի է վստահաբար ասել, որ շնորհիւ այս դպրոցի սաների՝ ԺԷ. դարի 20-ական թուականներին բուն Երեւանում արձանագրուել է գրչարուեստի իսկական զարթօնք, որը շարունակուել է մինչեւ դարավերջ[66]։

ԺԷ. դ. բուն Երեւանում ընդօրինակուած ձեռագրերի յիշատակարաններում, բացի Սուրբ Անանիա առաքեալի անապատից, որպէս գրչավայր՝ յիշատակւում են նաեւ Կաթողիկէ Սուրբ Աստուածածինը, Երկուերեսնին (Սուրբ Պօղոս-Պետրոս), Զորագիւղի անապատի Սուրբ Սարգիս եւ Սուրբ Յակոբ եկեղեցիները։ 1631 թ. «ընդ հովանեաւ Սուրբ Կաթուղիկէիս եւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Երկու երեսու» Մկրտիչ գրիչն ընդօրինակել է ներկայումս Բեռլինի արքայական գրադարանում պահուող ծիսական մի ժողովածու (ԲԱԳ, Մինուտոլի հաւաքածոյ, Հմր 286), որը պարունակում է Սաղմոսարան, Ժամագիրք եւ Տօնացոյց[67]։ Համանուն մէկ այլ գրիչ՝ Մկրտիչ Երէցը, դարձեալ Կաթողիկէի հովանու ներքոյ 1646 եւ 1654 թթ. ընդօրինակել է համապատասխանաբար ՄՄ Հմր 2056 եւ Նոր Զուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքի մատենադարանում պահուող Հմր 494/92 ձեռագրերը։ Դրանցից առաջինը պարունակում է ընդհանրական եկեղեցու սուրբ հայրերից Փիլոն Եբրայեցու «Մատենագրութիւն»-ը[68], իսկ երկրորդը՝ հայ եկեղեցու նշանաւոր գործիչ, աստուածաբան եւ փիլիսոփայ Գրիգոր Տաթեւացու «Գիրք հարց-

---

[63] Նոյն տեղում, էջ 175-177:

[64] Նոյն տեղում, էջ 179:

[65] **Յարութիւնեան Ա.**, Երեւանի Ս. Անանիա առաքեալի անապատը կամ Զօրաւոր Ս. Աստուածածին եկեղեցին, էջ 84:

[66] Տե՛ս **Յակոբեան Թ. Խ.**, Երեւանի պատմութիւնը (1500-1800 թթ.), էջ 388-391:

[67] **N. Karamianz**, Verzeichniss der Armenischen Handschriften der Königlichen Bibliothek zu Berlin, Berlin, A. Asher & Co., 1888, s. 28: Տե՛ս նաեւ Հայերէն ձեռագրերի ԺԷ. դարի յիշատակարաններ, հ. Բ, էջ 462:

[68] Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ. (ձեռագիրք 1801-2100), խմբագրութեամբ՝ **Տէր-Վարդանեան Գ.**, «Նայիրի» հրատ., Երեւան, 2012, սիւն 1269-1272:

մանց» երկը[69]։ Գրչի յիշատակարանները հիմնականում կարճ են եւ որպէս կանոն, բովանդակում են միայն տարեթուի, գրչավայրի, ստացողի մասին անհրաժեշտ նշումները։

Կաթողիկէ Սուրբ Աստուածածնի հովանու ներքոյ գրչութեամբ զբաղուած մեզ յայտնի ամէնից արդիւնաշատ գրիչը, անկասկած, Աւետիս երէց Երեւանցին է, որի ձեռագրաստեղծ գործունէութիւնը ներառում է 1660-1690-ական թթ.[70]։ Նրանից մեզ յայտնի 10 ձեռագրից առնուազն կէսում, երբեմն առանձին, երբեմն էլ յարակից այլ սրբավայրերի հետ, որպէս գրչավայր, նշուած է Երեւանի Կաթողիկէն։ Այդ ընդօրինակութիւնների մէջ առանձնանում են յատկապէս Առաքել Դաւրիժեցու պատուերով 1665 եւ 1666 թթ. գրչագրուած ներկայիս Վիեննայի Մխիթարեան մատենադարանի Հմր 137/83 եւ ՄՄ Հմր 1772 ձեռագրերը, որոնք բովանդակում են մատենագրի «Պատմութիւն»-ը[71]. «Գրեալ եղեւ գիրքս, որ կոչի Պատմագիրք, ի մեծ թվականիս Հայոց ՌՃԺԴ. (1665), ի մայրաքաղաքս Երեւան, ի դուռն սուրբ եկեղեցոյս, որ անուանի Կաթուղիկէ, հոգաբարձութեամբ, ծախիւք եւ արդեամբք Առաքեալ վարդապետի, որ է նոյն ինքն այս պատմագրքիս շինօղն եւ արարօղն», - կարդում ենք Աւետիս Երէցի յիշատակարանում[72]։

Արդարեւ, Աւետիս երէցը ԺԷ. դարի երեւանեան գրչօջախներում գործած բեղմնաւոր գրիչներից է եւ ընդօրինակութիւնների քանակով զիջում է միայն իրեն ժամանակակից, ծնունդով դարձեալ Երեւանից Գրիգոր գրչին կամ ինչպէս վերջինս է ներկայանում իր տասնեակ յիշատակարաններում՝ Գրիգոր Երեւանցուն[73]։ Քննելով վերջինիս ձեռագրական ժառանգութիւնը՝ կարող ենք ասել, որ Գրիգորը ո՛չ միայն Երեւանի, այլեւ առհասարակ, հայ գրչաշխարհի ամէնից արդիւնաշատ գրիչներից է[74]։ Գրիգոր Երեւանցու գրչութեան տարիները ներառում են 1658-1690-ական թթ. վերջերը, որոնց ընթացքում նա ձեռագրեր է ընդօրինակել Երեւանում, Նորագաւթում եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում։ Ընդհանուր առմամբ՝ գրչից մեզ յայտնի է 29 ձեռագիր[75], որոնցից մի քանիսի յիշատակարաններն աչքի են ընկնում նաեւ իրենց ուշագրաւ տեղեկութիւններով եւ բառապաշարով[76]։

ԺԷ. դարը, ինչպէս կարելի է տեսնել, իսկապէս գրչարուեստի զարթօնքի շրջան էր Երեւանի եւ նրա մերձակայքի գրչօջախների համար։ Այս հարիւրամեակի ընթացքում ձեռագրաստեղծ գործունէութեամբ աչքի են ընկել նաեւ մի շարք այլ գրիչներ (Առաքել Աբղ., Արիստակէս Սրկ. Նորուցցի, Գրիգոր Քհնյ., Ստեփանոս Քհնյ., Խաչատուր Դպիր,

---

[69] Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա., կազմեց՝ **Տէր-Աւետիսեան Ս.**, Վիեննա, Մխիթարեան տպ., 1970, էջ 766-767:

[70] Գրչի մասին մանրամասն տե՛ս **Յարութիւնեան Ա.**, Աւետիս երէց Երեւանցի գրչի ձեռագրական ժառանգութիւնը, «Բանբեր Մատենադարանի», թիւ 27, Երեւան, 2019, էջ 321-342:

[71] Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, [հ. Ա.], կազմեց **Տաշեան Հ. Յ. Վ.**, Վիեննա, Մխիթարեան տպ., 1895, էջ 430-433: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե., սիւն 1155-1158:

[72] Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, [հ. Ա.], էջ 433:

[73] **Յակոբեան Թ. Խ.**, Երեւանի պատմութիւնը (1500-1800 թթ.), էջ 396:

[74] **Ծովական (Պողարեան) Ն. Արք.**, Հայ գրիչներ (Թ.-ԺԷ. դար), Երուսաղէմ, տպ. Սբ. Յակոբեանց, 1992, էջ 377-379:

[75] **Յարութիւնեան Խ.**, Գրիգոր Երեւանցի՝ ԺԷ. դարի երկրորդ կէսի մի արդիւնաշատ գրիչ. Ա. գրիչը եւ նրա ձեռագրական ժառանգութիւնը, «Բանբեր Մատենադարանի», թիւ 29, Երեւան, 2020, էջ 57-80: Պէտք է նկատել, որ Թ. Յակոբեանը Գրիգոր Երեւանցուն նոյնացրել է նրան ժամանակակից եւ նոյնանուն մէկ այլ գրչի՝ Գրիգոր Քահանայի հետ: Նոյնը նկատելի է նաեւ Ն. Արքեպս. Պողարեանի պարագայում: Մեր այս յօդուածում անդրադարձել ենք այդ շփոթներին, յստակեցրել երկու գրիչներից մեզ յայտնի ձեռագրերը:

[76] **Յարութիւնեան Խ.**, Գրիգոր Երեւանցի՝ ԺԷ. դարի երկրորդ կէսի մի արդիւնաշատ գրիչ. Բ գրչի յիշատակարանները, «Բանբեր Մատենադարանի», թիւ 30, Երեւան, 2020, էջ 365-386:

Մելքեսէթ Երեւանցի եւ ուրիշներ), որոնցից մեզ հասած հատուկենտ ձեռագրերը վրկայում են վերջիններիս արհեստավարժութեան եւ հայկական ձեռագրական աւանդոյթների իմացութեան մասին։ Նկատելի է, որ ինչպէս նախորդ դարաշրջանների, այնպէս էլ ԺԷ. դարի ընթացքում տեղի գրիչների մեծագոյն մասը հոգեւորականներ էին, որոնք իրենց կրթութիւնը ստացել էին հիմնականում տարբեր վանքերի կամ եկեղեցիների հովանու ներքոյ գործող դպրոցներում, որտեղ սովորել էին նաեւ գրչութեան արուեստը։ Մեզ յայտնի թերեւս միակ բացառութիւնը Գրիգոր Երեւանցին է, որը հոգեւորական չի եղել, եւ ինչպէս երեւում է նրա ընտանիքի մասին յայտնի որոշ տուեալներից, իր նախնիներից կամ զաւակներից որեւէ մէկը եւս հոգեւորական չի եղել[77]։ Պարզ է, սակայն, որ գրչարուեստին նա նոյնպես պէտք է ծանօթացած լիներ վերոնշեալ գրչօջախներից մէկում, որի մասին դեռեւս տեղեկութիւն չունենք։

Այս առումով իրավիճակը զգալի փոփոխութիւններ չի կրում նաեւ յաջորդող դարերի ընթացքում. կրթութիւնն առնուազն մինչեւ Ի. դարասկիզբ Երեւանում եւ նրա մերձակայքում շարունակում է հասանելի լինել հիմնականում տարբեր եկեղեցիների հովանու ներքոյ, եւ որպէս կանոն՝ աշակերտները գրաճանաչ էին դառնում հէնց այդ եկեղեցիներին կից գործող ծխական դպրոցներում[78]։ Եւ պատահական չէ, որ այս ընթացքում եւս արտագրուող մատեանների զգալի մասն ունէր ծիսական բովանդակութիւն, թէեւ նկատելի են նաեւ այլ, այդ թւում՝ բշժկական բովանդակութեան մատեաններ։

Արդ, նկատելի է, որ ԺԸ-ԺԹ. դդ. տեղի գրչօջախներում շարունակուել է գրչութիւնը, ընդօրինակուել են տարբեր բովանդակութեան մատեաններ։ Այսպէս, 1703 թ. Երեմիա Երեւանցու պատուէրով Նիկողայոս Դպիրն ընդօրինակել է մի Խորհրդատետր (ՄՄ Հ^{մր} 443), որի գրչավայրը, ամենայն հաւանականութեամբ, Երեւանն է[79]։ 1776 թ. Սուրբ Անանիա առաքեալի անապատում Պետրոս Երէցն աւարտին է հասցրել ՄՄ Հ^{մր} 7939 ժողովածոյի ընդօրինակումը. «Ի ՌՄԻԵ. (1776) թվոյս առ դրան Սուրբ Անանեայի առաքելոյս, ձեռամբ յոգնամեղ Պետրոս իրիցոյ. յիշել հայցեմ վասն Աստուծոյ»[80]։ Դարավերջի ակտիւ գրիչներից է մասնագիտութեամբ բժիշկ Արութիւն Թաւրիզեցին, որը հիմնականում սեփական գործածութեան նպատակով բժշկական բովանդակութեամբ ձեռագրեր է ընդօրինակել[81]։ 1789 թ. Երեւանում գրչագրած Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպէտ» երկի (ՄՄ Հ^{մր} 2738) յիշատակարանում կարդում ենք. «Արդ, գրեցաւ գիրքս, որ կոչի Մուֆրատեթ, զոր ոմանք Տկիտաց անպետ ասեն, ի թվականութեանս ՌՄԼԸ. (1789)... աստուածայպահ քաղաքն Արարատեան, որ թուրքն ասէ էրեւան, ձեռանբն անարժան բժիշկ Արութիւնի՝ որդին Թարվեզցի Երամայի բժըշկի»[82]։

ԺԹ. դարում Երեւանում ակտիւ գրչութեամբ աչքի է ընկել Ոսկան Տէր-Գէորգեան Յովհաննիսեանցը կամ Ոսկան Յովհաննիսեանց Երեւանցին։ Վերջինս հայ ազատագրական պայքարի նշանաւոր գործիչ Յովսէփ Էմինի համար 1852 թ. ընդօրինակել է միջնադարի հայ մատենագիրներ Սեբէոսի եւ Ուխտանէսի «Պատմութիւն»-ները (համա-

---

[77] **Յարութիւնեան Խ.**, Գրիգոր Երեւանցի՝ ԺԷ. դարի երկրորդ կէսի մի արդիւնաշատ գրիչ. Ա. գրիչը եւ նրա ձեռագրական ժառանգութիւնը, էջ 62:

[78] **Յակոբեան Թ. Խ.**, Երեւանի պատմութիւնը (1801-1879 թթ.), էջ 276-277: Տե՛ս նաեւ **Խուդոյեան Ս. Կ.**, Արեւելահայ դպրոցները 1830-1920 թուականներին. ժամանակագրութիւնը յաւելեալ մանրամասներով, Երեւան, «Լոյս» հրատ., 1987, էջ 87-96:

[79] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, սիւն 713-714:

[80] **Յարութիւնեան Ա.**, Երեւանի Ս. Անանիա առաքեալի անապատը կամ Ջօրաւոր Ս. Աստուածածին եկեղեցին, էջ 110:

[81] **Յակոբեան Թ. Խ.**, Երեւանի պատմութիւնը (1500-1800 թթ.), էջ 317:

[82] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Թ. (ձեռագիրք 2701-3000), խմբագրութեամբ՝ **Տէր-Վարդանեան Գ.**, «Նայիրի» հրատ., Երեւան, 2017, սիւն 279:

պատասխանաբար՝ ՄՄ Հմր 3122, 3732). «Անզոյգ բարերարիդ Մկրտչի Յովսէփեան էմին միշտ էր խրատիդ աշակերտ եւ նուաստ /// Ոսկան Տէր-Գէորգեան Յովհաննիսեանց, 10 Յունվարի, 1852 ամի, Երեւան», - կարդում ենք գրչի այս կարճառօտ յիշատակարանում[83]։ Երեւանցի այս գրչին այնուհետեւ տեսնում ենք արդէն Մոսկուայում։ Յովհաննիսեանցից մեզ յայտնի է Մոսկուայում ընդօրինակուած առնուազն հինգ մատեան, որոնք պարունակում են հայ պատմիչներ Ստեփանոս Տարօնեցի Ասողիկի (ՄՄ Հմր 3730), Թովմա Մեծոփեցու (ՄՄ Հմր 3731), Վարդան Արեւելցու (ՄՄ Հմր 3733), Ղեւոնդ երէցի (ՄՄ Հմր 3741) «Պատմութիւն»-ները եւ Միքայէլ Ասորու «Ժամանակագրութիւն»-ը (ՄՄ Հմր 3728)։ Յատկանշական է, որ Յովհաննիսեանցը Մոսկուայում զբաղուել է նաեւ գրահրատարակչական գործով։ 1855 թ. սկսած՝ հրատարակել է «Նոր քնար Հայաստանի» բանաստեղծական շարքը, իսկ 1858 թ. հրատարակել է նաեւ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկը։ Ըստ «Հայ գիրք» մատենաշարի տուեալների՝ 1855-1859 թթ. Ոսկան Յովհաննիսեանց Երեւանցին ընդհանուր առմամբ հրատարակել է 9 միաւոր գիրք[84]։

Երեւանում ձեռագրեր են ընդօրինակուել նաեւ ԺԹ. դարի երկրորդ կէսին եւ յաջորդ դարի սկզբներին. 1865 թ. այստեղ ձեռագիր մի «Բժշկարան» է պատրաստել Մեսրոպ Տէր-Դաւթեանը (ՄՄ Հմր 9318), 1916 թ. Խաչատուր Բարսեղեան-Մարտիրոսեանցը Երեւանում աւարտել է իր կազմած ձեռագիր Ժողովածոն (ՄՄ Հմր 8337), որի աշխատանքներն սկսել էր դեռեւս 1896 թ. Արարատի մարզի Զանջրլու (Զնջուլու) գիւղում[85]։ Գրչի յիշատակարանում կարդում ենք. «Գրքոյկս այս գրուեցաւ Ա. մասն Զանջրլու գիւղում, 1896 թ., իսկ երկրորդ մասն արտագրուեց Յասմաւուրքից, 1916 թ., Երեւան քաղաքն, ձեռամբ Խաչատուր Մարտիրոսեանցին, որոյ յիշեսցէք զանարժան գրողս»[86]։

Ամփոփելով Երեւանի եւ նրա մերձակայքի գրչօջախներում գործած գրիչների վերաբերեալ մեր համառօտ շարադրանքը՝ կարող ենք ասել, որ առնուազն ԺԳ. դարավերջից մինչեւ Ի. դարասկիզբ այս կենտրոններում գրեթէ անընդմէջ գործել են գըրչարուեստի տասնեակ մշակներ։ Նրանցից մեզ յայտնի ձեռագրական ժառանգութիւնը գերազանցում է ինը տասնեակը։ Ի հարկէ, այս թիւը չի կարող արտացոլել վերը թուարկուած գրչօջախների ձեռագրական վաստակի իրական պատկերը, սակայն այսքանն էլ բաւարար է հաւաստելու Երեւանում եւ նրա արուարձաններում ու մօտակայ սըրբատեղիներում տարբեր վայրիվերումներով գործած եւ բազում փորձութիւնների դիմագրաւած միջնադարեան գրչօջախների առկայութիւնը։

ԽԱՉԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Բանասիրական գիտութիւնների թեկնածու,
Մաշտոցի անուան Մատենադարանի աւագ գիտաշխատող

---

[83] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ժ. (ձեռագիրք 3001-3400), խմբագրութեամբ՝ **Տէր-Վարդանեանի Գ.**, Երեւան, 2019, սիւն 592:

[84] Հրատարակչի ընդհանուր տուեալները տե՛ս անուանացանկում՝ **Ոսկանեան Ն.**, **Սաւալեան Ա.**, **Սողոմոնեան Մ.**, **Գիլումեան Օ.**, **Սահակեան Ա.**, **Թադեւոսեան Ս.**, Հայ գիրքը 1851-1900 թուականներին, առաջաբանը՝ **Ոսկանան Ն. Ա.**, խմբագիր՝ **Աբգարեան Գ. Ա.**, «Գիրք» հրատ., Երեւան, 1999, էջ 72:

[85] **Յակոբեան Թ. Խ.**, **Մէլիք-Բախշեան Ստ. Տ.**, **Բարսեղեան Յ. Խ.**, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Դ-Կ, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1988, էջ 312:

[86] **Յարութիւնեան Ա.**, Երեւանի Ս. Անանիա առաքելի անապատը կամ Ջօրաւոր Ս. Աստուածածին եկեղեցին, էջ 113:



Նկ. 1, ՄՄ Հմր 5929, 163ա, Ճառընտիր, ԺԳ. դար, գրիչ՝ Սարգիս Բահանայ



Նկ. 2, ՄՄ Հմր 530/Բ, 100ա, Առաքել Սիւնեցի, Համառօտ լուծմունք բերականութեան, ԺԵ. դ., գրիչ՝ Ստեփանոս Վարագեցի



Նկ. 3, ՄՄ Հմր 684 , 386ա, Հարանց վարք, 1650 թ., գրիչներ՝ Մարինոս եւ Մարիամ



Նկ. 4, ՄՄ Հմր 3424/Բ, 147բ, 1632 թ. գրիչ՝ Մարիամ



Նկ. 5, ՄՄ Հմր 9147, 11ա, Ժողովածոյ, 1623 թ., գրիչ՝ Զաքարիա Էջմիածնեցի